Հ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1980, 274 էջ։

Հայաստանի պատմության ուսումնասիրությունը հասել է այնպիսի աստիճանի, որ չի կարելի գոհանալ լոկ Հայկական լեռնաշխարհի պատմության հետազոտությամբ, այլ անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել Մեծ Հայքին անմիջականորեն սահմանակից երկրների պատմական ծագումնագիրը և դրանց փոխհարաբերությունները հայոց թագավորության հետ։ Այս առումով Հ. Մելքոնյանի մենագրությունը խիստ այժմեական է։

Աշխատությունը բաժանված է երեք մասի։ Առաջին մասի երկու գլուխներում հեղինակը շարադրում է Ադիաբենի մայրաքաղաք Արբելայի պատմությունը՝ սկսած հեռավոր դարերից, իսկ Ադիաբենի թագավորության պատմական անցքերի ընթացքը՝ մ. թ. ա. II դ—մ. թ. I դ.։

Հնագույն դարերից Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան կողմում, Ասորեստան կոչված երկրամասի այն հատվածում, որն ընկած է Տիգրիս գետի երկու փտակների՝ Փոքր և Մեծ Զաբերի միջև, եղել է Արբելա քաղաքը, որը հիշատակված է դեռ ասորաբաբելական սեպագիր արձանագրություններում։ Այստեղ բնակվել են խուրրիներ, որոնք այնտեղ են հաստատվել մ. թ. ա. III հազարամյակի սկզբին։ Երբ հզորանում են Բաբելոնն ու Ասորեստանը, այստեղ բնակություն են հաստատում սեմական ցեղեր, մանավանդ որ Դուր Շարրուկին ու Նինվե քաղաքներն էլ գտնվում էին այդ տարածության վրա, որը հետագայում կոչվեց Ադիաբեն կամ Ադիաբենե։ Ասորեստանի հզորացման շրջանում Արբելան ծաղկում է որպես առևտրական կարևոր հանգույց։ Ասորեստանի արքաների համար այդ քաղաքն այնքան նվիրական էր, որ ռազմարշավների նախօրեին Արբելայի Իշտար դիցուհու կամքն էին հայցում, նամանավանդ, որ մեհյանին առընթեր կար աստղադիտարան։

Ասորեստանյան բռնապետության կործանմանը մասնակցել են բազում ժողովուրդներ, որոնց հետ էին նաև հայերը։ Վերջիններս դարերի ընթացքում հաստատվում են Արբելայի շրջակա գավառներում, զույգ Զաբերի միջև ընկած երկրամասում։

Ասորեստանին և նոր բաբելական (քաղդեական) թագավորության փոխարինած Մարական (Մեդական) և Աքեմենյան իրանական թագավորությունների ժամանակաշրջանում Արբելան այդ պետությունների գերիշխանության ու բռնության դեմ պայքարի ամրոց էր դարձել, որի մասին ակնարկ կա Դարեհ արքայի Բեհիսթունյան արձանագրություններում։ Այս դարաշրջանում երկիրը կոչվում էր Աթուրիա (Ասորեստան)։

Հեղինակը մանրամասն բացատրում է, որ Ասորեստան, Աթուրիա կոչվող այս երկիրը Սելևկյան տիրապետության ժամանակ սկսել է աստիճանաբար անվանվել Ադիաբեն։ Այդ երկիրը նեղ իմաստով կոչելու համար հույն պատմագիրներն օգտագործել են Արբելիտիս տեղանունը՝ մայրաքաղաքի անվանումով։ Ադիաբեն անվան ծագման մասին եղել են ավանդություններ, որոնցից մեկը հաղորդում է Ամմիանոս Մարկելլինոսը (IV դ.)։ Սակայն հեղինակը հենվելով Ստրաբոնի այն տեղեկության վրա, թե Մեծ Զաբը կոչվել է Լիկոս (գայլ), իսկ այլ աղբյուրների համաձայն Դիաբա, որը նույնպես ասորերեն գայլ է նշանակում, հանգել է այն եզրակացության, որ Մեծ Զաբի Դիաբա անունից էլ երկիրը կոչվել է Ադիաբես (Ադիաբենե)։ Սա կարևոր եզրակացություն է, որն արժանի է ընդգծման։

Ադիաբենը Սելևկյան պետության կազմում եղել է մոտավորապես երկու դար։ Սակայն այս տերության դեմ գլուխ բարձրացրին պարթևները, որոնց առաջնորդ Արշակը մ. թ. ա. 247 թ. հռչակվեց արքա և ստեղծեց մի ընդարձակ պետություն։ Մյուս կողմից, հռոմեական լեգեոնները ներխուժեցին Փոքր Ասիա և մ. թ. ա. 190 թ. Մագնեզիայի ճակատամարտում վճռական հաղթանակ տարան Սելևկյանների դեմ։ Դրանից անմիջապես հետո Հայաստանում կազմվեց Արտաշեսյանների հզոր թագավորությունը, որի ստեղծումը նպաստեց երկրի հարավում նոր քաղաքական միավորների գոյացմանը։ Ստեղծվեցին Օսրոենե (Եդեսիա մայրաքաղաքով), Հատրենե և Ադիաբենե թագավորությունները, որոնք, սակայն, պարթևական պե-

տության քաղաքական ազդեցության ոլորտում էին գտնվում։ Ըստ Հ. Մելքոնյանի, Ադիաբենի թագավորությունը ստեղծվել է հավանաբար մ. թ. ա. 123 թ.։

Բացի նվաճելու ձգտումից, պարթևները հրապուրված էին նաև Արբելայի առևտրական կարևոր հանգույց լինելու հանգամանքով։ Արբելան գտնվում էր միջազգային առևտրական կարավանային մայրուղիների վրա, որոնք հին աշխարհում նշանավոր «մետաքսե ճանապարհի» մասն էին կազմում և որի վրայով Չինաստանից բերում էին հախճապակի ու մետաքս և միաժամանակ հակառակ ուղղությամբ տանում էին այլ ապրանքներ։

Շուտով արևելյան աշխարհում ասպարեզ իջավ մի նոր քաղաքական ուժ՝ Տիգրան Մեծի հզոր հայկական տերությունը, որը մեծ փոփոխություններ մտցրեց ժամանակի քաղաքական կյանքում։ Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոսի սահմանները ձգվող հայկական կայարությունը, բնականաբար, պիտի ընդգրկեր նաև Ադիաբենը, որն անմիջապես դրացի էր Մեծ Հայքին։ Արքայից արքան կառուցելով նոր մայրաքաղաք՝ Տիգրանակերտը, այն շենացնելու նպատակով հունական և այլ քաղաքների բնակիչներին վերաբնակեցրել էր իր այս ոստանում։ Պլուտարքոսը վկայում է, որ նորակերտ քաղաքամայրում հաստատվեցին հույներ, ադիաբենցիներ, ասորիներ և այլն։ Հետամուտ լինելով երկրի տնտեսական բարգավաճմանը, մեծ քաղաքագետը հոգ էր տանում միջազգային առևտրական ճանապարհների մասին, որոնց վրա էր գտնվում նաև Արբելան։ Տիգրան Մեծի հզոր տերությունը ծաղկման հնարավորություններ տվեց իր նահանգներին, որը դարերի ընթացքում արևելքում և այլուր հայության կատարած քաղաքակրթիչ դերի մի վկայություն է։ Հեղինակը վկայակոչելով ակադ. Հ. Մանանդյանին, եզրակացնում է, որ Տիգրան Մեծի օրոք զարգացել էր միջազգային առևտուրը և աշխուժացել քաղաքային կյանքը։

Հ. Մելքոնյանը քննության է առնում նաև այն հարցը, թե ինչպիսի տրամադրություններ կային Ադիաբենում Տիգրան Մեծի օրոք։ Հայաստանին հպատակ Ադիաբենը և նրա թագավորը միշտ էլ հավատարիմ են եղել նրան։ Պլուտարքոսի վկայությամբ, Տիգրանակերտի ազնվալի ճակատամարտում արքայից արքայի կողքին, որպես հայոց զորքի ձախ թևի հրամանատար, մինչև վերջ կռվեց Ադիաբենի թագավորը։

Երբ Տիգրան Մեծը մ. թ. ա. 66 թ. ստիպված հրաժարվեց իր նվաճած նահանգներից՝ պահպանելով միայն Մեծ Հայքի թագավորությունը, Ադիաբենը նորից ընկավ պարթևական Իրանի տիրապետության տակ։ Այս շրջանում Ադիաբենում հաստատված հայ վերնախավի որոշ ներկայացուցիչներ փոխադրվում են Հայաստան։ Ադիաբենի թագավորներն աղբյուրներում կոչվում են Մանավազյաններ։ Կարծվում է, որ Հայաստանի Մանավազյան նախարարները այդ տոհմի ճյուղն են կազմում։

Մինչ աշխատության այս մասը, հեղինակի աշխատանքը կրում է ընդհանրացնող բնույթ, որն անհրաժեշտ էր որպես ներածություն և կարող էր ավելի հակիրճ լինել։ Սրանից հետո սկսում է մենագրական մասը, որը հեղինակի տքնաջան պրպտումների արգասիքն է։

Ադիաբենի թագավորության մեջ I դ. կատարված պատմական իրադարձությունների կարևոր աղբյուր են Հովսեպոս Փլավիոսի հունարեն մատյանները։ Շնորհիվ այս աղբյուրի, արդեն հակասեռ հանվանեն հայտնի են Ադիաբենի թագավորները և նրանց գործունեությունը։

Աշխատության մեջ հետաքրքրական ձևով են նկարագրված կրոնական պայքարն ու տրամադրությունները Ադիաբենում և շրջակա երկրներում՝ I դ.։ Պարթևական պետության մեջ, որն այդ ժամանակ կրոնների մի խայտաբղետ խճանկար էր, որոշ հովանավորության էր արժանանում զրադաշտականությունը, մի կրոն, որը Սելևկյան տիրապետության շրջանում թուլացել էր։ Սակայն պարթևների օրոք Ահուրամազդայի պաշտամունքը միակ կրոնը չէր և արքաները հաշվի էին նստում նաև տեղական հին կրոնների հետ։ Բաբելյացի քրմերը դեռ պահում էին իրենց իրավունքները։ Կային Բելի և Իշտարի մեհյանները, որոնք իրենց բազում հետևորդներն ունեին։ Հատկապես նշանավոր էր Արբելայի Իշտար դիցուհու մեհյանը։ Մեծ ժողովրդականություն էր վայելում նաև Նանա դիցուհին։ Խիստ ուժեղ էին լավ կազմակերպված հրեական կրոնական համայնքները։ Հունական աստվածությունները նույնպես իրենց ուրույն տեղն ունեին, մանավանդ որ պարթևական գրամների վրա կային դրանց պատկերները։

Հին սեմական աստվածությունները իրանականների հետ հաշտեցնելու համար գրանք նույնացնում էին. այսպես՝ Ահուրամազդային համապատասխանում էր Բելը, Միթրային՝ Շամաշը, Իշտարին կամ Նանային՝ Անահիտը և այլն։

Նակայն Ադիաբենը դիմադրեց զրադաշտականությանը և այլ կրոններին։ Այնտեղ տարածվեց այսպես կոչված «հրեական» կրոնը, որն ըստ Հ. Մելքոնյանի ոչ թե բուն մովսիսականությունն էր, այլ դեռևս հրեական միջավայրից չկտրված նախնական քրիստոնեական համայնքներից մեկը։ Ահա այս կրոնին էին հարել Ադիաբենի թագավոր Իզատեսը և նրա մայր Հեղինեն։

Իզատեսի օրոք Ադիաբենի թագավորությունը որոշակի կշիռ ու հեղինակություն ուներ։ Երբ պարթևների Արտավան Գ արքան իր հակառակորդներից փախչելով ապաստանեց Իզատեսի մոտ, սա օգնեց նրան՝ վերստանալու թագավորական գահը։ Այդ ժամանակներում պարթևները Մեծ Հայքի թագավորությունից խլելով Հայկական Միջագետք ու Արաբստան (Մծբին կենտրոնով) նահանգները՝ դրանք տվեցին Ադիաբենին։

Ադիաբենի թագավոր Իզատեսի ավագ եղբայր Մոնոբազը (Մանավազ) նախարարների օգնությամբ պայքարում էր նրա դեմ։ Շուտով մեռավ Իզատեսը (մոտավորապես 53 կամ 54 թ.) և Մոնոբազ Բ-ն դարձավ թագավոր։

Պարթև Արշակունի Վաղարշ Ա-ի օրոք (51—79) Պարսկաստանի, Հայաստանի ու Ադիաբենի միջև տեղի ունեցավ համախմբում։ Մոնոբազ Բ-ն Վաղարշի ամենամտերիմ զինակիցներից էր։ Վաղարշը, իր եղբայր Բակուրին Ատրպատականի թագավոր դարձնելուց հետո, կամեցավ օգտվել Հայաստանում ուժեղացող հակահռոմեական տրամադրություններից, որոշ համակրանք չունել և անորոշ վիճակում գտնվող հայոց թագավորության գահին նստեցնել իր եղբորը՝ Տրդատին։ Սկսում է պատերազմը մի կողմից հայերի ու պարթևների, մյուս կողմից՝ Հռոմի միջև, որը վերջացավ Նրանով, որ 66 թ. Տրդատ Արշակունին դարձավ հայոց թագավոր։

Ըստ էության Մեծ Հայքի թագավորությունն իր ժամանակի երեք հզոր տերություններից մեկն էր (Հռոմից ու Իրանից հետո) և Ադիաբենն այդ ժամանակաշրջանում այս կամ այն կերպ կապված է եղել Հայաստանի հետ։ Ադիաբենի թագավորներն ակներևորեն Հայաստանի Արշակունի թագավորներին տոհմակից էին։ Երբ 65 թ. հայոց առաջին Արշակունի Տրդատ արքան իր իշխանության հաստատման համար գնում էր Հռոմ, նրա շքախմբում էին նաև Ադիաբենի Մոնոբազ թագավորի որդիները։

Հ. Մելքոնյանի մենագրության առաջին մասի երրորդ գլխում քննության է առնված Ադիաբենից Հայաստան գաղթած մի քանի նախարարական տների ճակատագիրը, և ինչքան էլ, որ դա հետաքրքրական է որպես հեղինակի նեղ մասնագիտական ուսումնասիրություններին արդյունք, կարելի է ընդունել վերապահությամբ։ Բանն այն է, որ Մոնոբազ Բ թագավորի գլխավորությամբ Ադիաբենի զորքերը Տրդատ Ա թագավորի հետ դաշնակցած կռվել էին ընդդեմ Հռոմի և ահա Ադիաբենի նախարարներից ոմանք, ի վարձատրություն իրենց կատարած ծառայությունների, հողային կալվածներ ստացան և հաստատվեցին Հայաստանում։ Հեղինակը ենթադրում է, որ դրանցից պետք է ծագած լինեն, օրինակ, Խորխոռունիների տոհմը, ինչպես նաև Գնունիների տոհմը, որը «ձերէս» գործակալությունն էր վարում։ Հեղինակը Մովսես Խորենացու հաղորդած «ձերէս» բառը բացատրում է ասորերեն իմաստով՝ որպես զգեստավորողներ։ Մովսես Խորենացին հիշում է նաև, թե հայոց Վաղարշակ արքան Մոկսի նախարարությանը հանձնում է մի մարդու, որի ձեռքի տակ «արիկաներ» կային։ Այս բառը հեղինակը մեկնում է ասորերեն իմաստով որպես անգեն, մերկ, այսինքն՝ զինված գնդերին ծառայող անգեն մարդիկ։

Աշխատության երկրորդ մասն իր երկու գլուխներով նվիրված է Ադիաբենում պարսկա-հռոմեական տիրապետության շրջանին։ Տրդատոս կայսրը Հայաստան ներխուժելուց հետո իրավ Վերին Միջագետք և, 116 թ. մտնելով Ադիաբեն, վերացրեց այդ թագավորությունն ու այն անվանեց Ասորեստան (Ասսիրիա) նահանգ։ Ադիաբենի վերջին թագավորը՝ Մեհարատպեսը, հավանաբար սպանվեց։ Սակայն շուտով մեռավ Տրդատոսը և նրա հաջորդ Հադրիանոս կայսրը հրաժարվեց Տրդատոսի նվաճումներից, հետևելով Օգոստոս կայսեր օրոք ընդունված սկզբունքին։ Ըստ որում, Հռոմեական պետության սահմանն արևելքում պետք է լիներ Եփրատը։ Մեծ Հայքը շարունակեց մնալ անկախ թագավորություն, իսկ Ադիաբենը նորից ընկավ պարթևների տիրապետության տակ և թագավորության փոխարեն դարձավ հասարակ մարզ կամ նահանգ։

Մենագրության խիստ հաջողված հատվածներից է երրորդ մասը, որը նվիրված է եկեղեցական թեմերի կյանքին ու կազմակերպությանը։ Այդ դարերում սկսեց քրիստոնեության լայն տարածումը Մերձավոր արևելքի երկրներում։ Ադիաբենը, որն իր ճակատագրով միշտ

կապված է եղել Հայաստանին և Օսրոենին, վերջիններիս նման հակադրվելով գրադաշտականությանը, ընդունեց քրիստոնեությունը, որն արդեն II դ. արմատներ էր գցել այդ երկրներում։ Ադիաբենը ենթակա էր Տիզբոնի նեստորական կաթողիկոսությանը, որին ենթակա եպիսկոպոսական աթոռներից մեկն էր Արբելայի մետրոպոլիտությունը։

Հ. Մելքոնյանի մենագրությունն արժեքավոր ներդրում է հայագիտության առապարեզում։ Նա ոչ միայն առաջին անգամ է շարադրում Ադիաբենի պատմությունը, այլև տալիս է Հայաստանի ու Ադիաբենի դարավոր փոխհարաբերությունների գիտական վերլուծությունը։

Այս հետաքրքրական աշխատությունը, անկասկած, կշահեր, եթե ունենար հին և միջնադարյան աղբյուրների ու գրականության տեսություն և աղբյուրների ու գրականության մատենագիտություն։

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր